

4.ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

4.1. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.1.1. Արտաքին առևտուր

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2000թ. հունվարին, փաստացի գներով, կազմել է 36606.95 մլն. դրամ կամ 69.65 մլն. դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 7170.7 մլն.դրամ (13.63մլն.դոլար) և ներմուծումը՝ 29436.25 մլն. դրամ(56.02 մլն.դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 22265.56 մլն.դրամով (42.39 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների՝ 19565.16 մլն. դրամով (37.28 մլն. դոլարով):

2000թ. հունվարին 1999թ. հունվարի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 0.9%-ով: Ընդ որում, արտահանումն աճել է 16.32%-ով, իսկ ներմուծումը նվազել՝ 2.24%-ով, որի արդյունքում բացասական առևտրային հաշվեկշիռը նվազել է 7.0%-ով:


2000թ. հունվարին ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 10538.76 մլն.դրամ (20.2 մլն.դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 29.0%-ը (1999թ. հունվարին՝ 32.26%), իսկ այլ երկրների հետ՝ 26068.19 մլն.դրամ (49.5 մլն. դոլար) կամ 71.0%-ը (1999թ. հունվարին՝ 67.74%), որից ԵՏՄ երկրների հետ՝ 12413.9 մլն. դրամ (23.6 մլն. դոլար) կամ 33.84%-ը (1999 թվականի հունվարին՝ 34.99%):

2000թ. հունվարին ԱՊՀ երկրներ են արտահանվել 1591.64 մլն.դրամի (3.02 մլն. դոլարի) և ներմուծվել՝ 8947.12 մլն.դրամի (17.2 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 7355.47 մլն. դրամով (14.16 մլն.դոլարով): Նույն ժամանակաշրջանում այլ երկրներ են արտահանվել 5579.1 մլն.դրամի (10.6 մլն.դոլարի), իսկ ներմուծվել՝ 20489.13 մլն. դրամի (38.8 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 14910.08 մլն. դրամով (28.23 մլն.դոլարով):


1999թ. հունվարի համեմատ 2000թ. հունվարին ապրանքների արտահանումն ԱՊՀ երկրներ նվազել է 14.32%-ով: Արտահանումը դեպի այլ երկրներ աճել է 29.5%-ով: Ներմուծման ծավալը ԱՊՀ երկրներից նվազել է 8.35%-ով, իսկ այլ երկրներից աճել է՝ 0.74%-ով:

Արտահանման և ներմուծման ծավալները 1999 և 2000 թթ. հունվար ամիսներին, ըստ ԱՊՀ և այլ երկրների

Արտահանում (մլն. դոլար)



Ներմուծում (մլն. դոլար)



Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունն 2000թ. հունվարին, ըստ առանձին երկրների

Երկրի անվանումը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրա- յին հաշվե- կ-ռը ,հազ.\$
	Արժեքը		Տեսակ. կշիռը	Արժեքը		Տեսակ. կշիռը	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	7170.70	13627.36	100.00	29436.25	56020.45	100.0	-42393.09
որից՝							
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	1591.64	3019.60	22.16	8947.12	17177.13	30.66	-14157.53
այդ թվում՝							
Ռուսաստան	682.36	1293.69	9.49	7442.68	14318.54	25.56	-13024.85
Թուրքմենստան	169.14	320.94	2.36	4.20	7.99	0.01	312.95
Վրաստան	549.45	1043.43	7.66	720.75	1370.66	2.45	-327.23
Բելոռուս	31.92	60.64	0.44	27.36	52.20	0.09	8.44
Ռեկրահնա	76.80	146.41	1.07	611.59	1160.80	2.07	-1014.39
Ղազախստան	22.36	42.62	0.31	47.50	89.59	0.16	-46.97
Այլ երկրներ	59.61	111.87	0.82	93.04	177.35	0.32	-65.48
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ	5579.05	10607.75	77.84	20489.13	38843.32	69.34	-28235.56
այդ թվում՝							
ԵՏՄ երկրներ	3539.92	6738.15	49.45	8873.98	16829.68	30.04	-10091.53
Ավստրիա	0.00	0.00	0.00	77.42	147.30	0.26	-147.30
Բելգիա	2526.19	4811.63	35.31	3871.34	7341.73	13.11	-2530.10
Ֆրանսիա	6.03	11.44	0.08	1478.23	2807.82	5.01	-2796.38
Գերմանիա	557.88	1059.93	7.78	1324.53	2506.76	4.47	-1446.83
Իտալիա	112.78	215.22	1.58	644.45	1222.87	2.18	-1007.65
Նիդեռլանդներ	3.95	7.52	0.06	259.93	492.20	0.88	-484.69
Սեծ Բրիտանիա	329.49	625.56	4.59	937.30	1777.89	3.17	-1152.33
Յունաստան	3.60	6.86	0.05	40.28	76.62	0.14	-69.76
Իռլանդիա	0.00	0.00	0.00	7.72	14.60	0.03	-14.60
Դանիա	0.00	0.00	0.00	119.80	227.14	0.41	-227.14
Այլ երկրներ	0.00	0.00	0.00	112.97	214.75	0.38	-214.75
Շվեյցարիա	10.49	19.84	0.15	396.09	754.75	1.35	-734.91
Իրան	827.80	1574.59	11.55	2968.55	5632.25	10.05	-4057.67
Թուրքիա	85.27	161.63	1.19	731.73	1388.14	2.48	-1226.51
Մ.Արաբական Էմիր.	52.47	99.40	0.73	1246.93	2364.97	4.22	-2265.56
ԱՄՆ	491.77	935.27	6.86	3334.59	6303.15	11.25	-5367.88
Բուլղարիա	53.42	101.03	0.74	125.57	237.76	0.42	-136.73
Այլ երկրներ	517.92	977.84	7.18	2811.70	5332.62	9.52	-4354.78

2000թ.հունվարին արտահանման ծավալի 22.16%-ն ուղղվել է ԱՊՀ երկրներ (այդ թվում

9.49%-ը՝ Ռուսաստանի Դաշնություն, 7.66%-ը՝ Վրաստան և 5.01%-ը՝ ԱՊՀ այլ երկրներ), 77.84%-ը աշխարհի այլ երկրներ, այդ թվում՝ 49.45%-ը՝ ԵՏՄ երկրներ (որից 35.31%-ը՝ Բելգիա), 11.55%-ը՝ Իրան, 6.86%-ը՝ ԱՄՆ, 7.78%-ը՝ Գերմանիա, 4.59%-ը՝ Մեծ Բրիտանիա:

Ներմուծման ծավալի 30.66%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից 25.56%-ը՝ Ռուսաստանի Դաշնությանը), իսկ 69.34%-ը՝ աշխարհի այլ երկրներին, այդ թվում՝ 30.04%-ը՝ ԵՏՄ երկրներին (որից 3.17%-ը՝ Մեծ Բրիտանիային, 13.11%-ը՝ Բելգիային), 11.25%-ը՝ ԱՄՆ-ին, 10.05%-ը՝ Իրանին, 2.48%-ը՝ Թուրքիային:

Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվարին, ըստ առանձին ապրանքախմբերի

	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով	Հաշվեկշիռը հազ. \$
	մլն. դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	7170.70	13627.36	100.00	29436.25	56020.45	100.00	-42393.08
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	8.99	17.06	0.13	842.08	1597.49	2.85	-1580.43
Բուսական ծագման արտադրանք	4.95	9.38	0.07	2199.86	4174.09	7.45	-4164.72
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.00	0.00	0.00	591.37	1124.41	2.01	-1124.41
Պատրաստի սննդի արտադրանք	578.63	1097.44	8.05	1417.12	2688.68	4.80	-1591.24
Հանքահումքային արտադրանք	615.51	1165.76	8.55	9055.62	17371.44	31.01	-16205.68
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	25.95	49.38	0.36	3538.15	6684.97	11.93	-6635.60
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	106.82	202.04	1.48	396.29	751.74	1.34	-549.70
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	85.31	161.72	1.19	14.27	27.12	0.05	134.61
Փայտ և փայտյա իրեր	2.70	5.14	0.04	240.02	455.44	0.81	-450.31
Թուղթ և թղթից իրեր	14.17	26.95	0.20	563.49	1068.86	1.91	-1041.91
Մանածագործական իրեր	274.82	522.79	3.84	626.38	1189.10	2.12	-666.32
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	16.43	31.21	0.23	44.92	85.25	0.15	-54.04
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	20.04	38.06	0.28	183.94	349.16	0.62	-311.11
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	3768.34	7168.39	52.60	4694.22	8903.35	15.89	-1734.95
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	1153.27	2190.76	16.08	564.40	1072.74	1.91	1118.03
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	275.48	523.79	3.84	2800.82	5321.81	9.50	-4798.02
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	141.58	269.61	1.98	1107.78	2100.79	3.75	-1831.18
Սարքեր և ապարատներ	72.60	138.21	1.01	258.50	490.02	0.87	-351.81
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	2.78	5.28	0.04	297.04	563.98	1.01	-558.70
Արվեստի ստեղծագործություններ	2.32	4.39	0.03	0.00	0.00	0.00	4.39

2000թ. հունվարին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 52.6%-ը կազմել են մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 8.55%-ը՝ հանքահումքային արտադրանքը, 16.08%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (որի շուրջ 52.5 տոկոսը կազմում է ոչ թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը), 3.84%-ը՝ մանածագործական իրերը, 3.84%-ը՝ մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները, 8.05%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը: Ներմուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 17.1%, հանքահումքային արտադրանքը՝ 31.01%, մշակված և անմշակ ալմաստները,

թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 15.89%, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 9.5%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանքը՝ 11.93%:

2000թ. հունվարին առևտրային հաշվեկշիռը դրական է միայն երեք ապրանքախմբերի գծով, հիմնականում՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբում՝ 1118.03 հազ. դոլար, կաշվե հումքի, կաշվի, մորթու և դրանցից պատրաստված իրերի խմբում՝ 134.61 հազ. դոլար և արվեստի ստեղծագործությունների խմբում՝ 4.39 հազ. դոլար: Իսկ մնացած ապրանքախմբերում առևտրային հաշվեկշիռը բացասական է: Միայն սննդամթերքի գծով բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 8460.8 հազ. դոլար, հանքահումքային արտադրանքի գծով՝ 15198.52 հազ. դոլար:

2000թ. հունվարին արտահանման և ներմուծման ծավալների աճերի տեմպերը 1999թ. հունվարի համեմատությամբ, ըստ ապրանքախմբերի

	Արտահանում			Ներմուծում		
	1999թ. հունվար Հազ. \$	2000թ. հունվար Հազ. \$	աճի տեմպը (%)	1999թ. հունվար Հազ. \$	2000թ. հունվար Հազ. \$	աճի տեմպը (%)
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	11715.61	13627.36	116.32	57302.76	56020.45	97.76
այդ թվում՝						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	18.58	17.06	91.80	3173.44	1597.49	50.34
Բուսական ծագման արտադրանք	37.27	9.38	25.15	5188.96	4174.09	80.44
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.00	0.00	~	1215.58	1124.41	92.50
Պատրաստի սննդի արտադրանք	458.06	1097.44	239.58	5090.20	2688.68	52.82
Հանքահումքային արտադրանք	1938.82	1165.76	60.13	18295.03	17371.44	94.95
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	92.66	49.38	53.29	2282.30	6684.97	292.91
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինի իրեր	538.67	202.04	37.51	1109.98	751.74	67.73
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	121.44	161.72	133.17	71.06	27.12	38.16
Փայտ և փայտյա իրեր	2.92	5.14	176.13	184.59	455.44	246.73
Թուղթ և թղթից իրեր	16.46	26.95	163.77	944.88	1068.86	113.12
Մանածագործական իրեր	556.17	522.79	94.00	1855.83	1189.10	64.07
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	17.80	31.21	175.31	249.26	85.25	34.20
Իրեր քարից, գիպսից,ցեմենտից	7.58	38.06	502.27	542.98	349.16	64.31
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	5140.21	7168.39	139.46	4763.15	8903.35	186.92
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	1817.30	2190.76	120.55	1209.81	1072.74	88.67
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	448.99	523.79	116.66	6134.60	5321.81	86.75
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	371.69	269.61	72.54	3306.99	2100.79	63.53
Սարքեր և ապարատներ	105.16	138.21	131.43	1123.88	490.02	43.60
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	8.56	5.28	61.75	108.69	563.98	518.90
Արվեստի ստեղծագործությ.	17.28	4.39	25.43	451.55	0.00	0.00

Նախորդ տարվա համեմատ արտահանման ծավալի աճ է տեղի ունեցել հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի (1.39 անգամ), մեքենաների, սարքավորումների և մեխանիզմների (1.17 անգամ), պատրաստի սննդի արտադրանքի (2.4 անգամ) ապրանքախմբերի գծով: Միևնույն ժամանակ 39.9 տոկոսով նվազել են հանքահումքային արտադրանքի, 62.5 տոկոսով՝ պլաստմասսայի և դրանցից իրերի, 27.5 տոկոսով՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների, 6 տոկոսով՝ մանածագործական իրերի արտահանումը:

1999թ. հունվարի համեմատությամբ 1.87 անգամ աճել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի, 2.9 անգամ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի, 1.1 անգամ՝ թղթի և թղթից իրերի ներմուծումը: Միևնույն ժամանակ 32.3 տոկոսով նվազել են պլաստմասսայի և դրանցից իրերի, 19.6 տոկոսով բուսական ծագման արտադրանքի, 47.2 տոկոսով՝ պատրաստի սննդի արտադրանքի, 36.5 տոկոսով վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների, 5.1 տոկոսով՝ հանքահումքային արտադրանքի, 49.7 տոկոսով՝ կենդանիների և կենդանական ծագման արտադրանքի, 7.5 տոկոսով՝ կենդանական և բուսական ծագման յուղերի և ճարպերի ներմուծման ծավալները: